Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

https://www.improvetam.eu/

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

IMPROVET-AM

ՏԵՂԵԿԱՏՈՒ N 3

Project 101128630

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սանիտար/անձնական օգնականի հաղորդակցման հմտությունները. բովանդակությունից մինչև դասի պլան

Ատամնատեխնիկական կրթության նոր մոդուլներ

Erasmus+IMPROVET-AM վերապատրաստման դասընթացներԳյումրու պետական բժշկական քոլեջում

IMPROVET-AM ծրագրի միջանկյալ գնահատում

Կարիերայի ուղղորդում և արդյունավետ կառավարում. Վեբինարների շարք

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Սանիտարի/անձնական օգնականի հաղորդակցման հմտությունները. բովանդակությունից մինչև դասի պլան

2025թ. մայիսին IMPROVET_AM նախագծի աշխատանքային թիմը՝ ի դեմս Ապրո Ֆորմացիոնե ուսումնական կենտրոնի, և La Cooperativa Sociale Progetto Emmaus խնամքի կենտրոնի մասնգետները անցկացրեցին առցանց դասընթաց հայաստանյան գործընկերների համար: La Cooperativa Sociale Progetto Emmaus կենտրոնը Ալբա քաղաքի խոշորագույն ընկերություն է, որը խնամք է տրամադրում հաշմանդամություն ունեցող, տարեց և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց:

Երկու առցանց հանդիպումների ընթացքում քննարկվեց կարեկցանքի թեման՝ հատուկ ուշադրություն դարձնելով վարքային ճգնաժամի կառավարմանը: Նման իրավիճակներ կարող են առաջանալ ցանկացած աշխատանքային միջավայրում: Աշխատակիցները պետք է իմանան, թե ինչպես վարվել նման դեպքերում:

Փորձագետները տրամադրեցին տեսական ընդհանուր տեղեկատվություն՝ ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներից: Խոսվեց նաև առողջապահության ոլորտի մասնագետների՝ բուժքույրերի, բժիշկների, սանիտարների/անձնական օգնականների մասնագիտական միջամտության կարևորության մասին: Այնուհետև հանձնարարվեց գործնական առաջադրանք վարքային ճգնաժամից դուրս գալու թեմատիկայի շուրջ:

Դասընթացի մասնակիցները հնարավորություն ունեցան կազմելու դասի պլան ուսումնասիրած թեմաների շուրջ՝ ներառելով դասավանդման տարբեր մեթոդներ:

Դասընթացը օգնեց հասկանալ հաղորդակցման գործիքների կարևորությունը: Այն նպատակ էր հետապնդում հնարավորություն տալ հայ դասավանդողներին կիրառել վերոնշյալ գործիքները և կիսվել ապագա ուսանողների մոտ հաղորդակցման հմտությունների զարգացման գաղափարներով:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

Ատամնատեխնիկական կրթության նոր մոդուլներ

ՍԵՊՖԱ-ի և ՍԵՊՌ-ի Ատամնատեխնիկական գործ մասնագիտության դասավանդողները համատեղ ուժերով մշակել են չորս նոր ուսումնական մոդուլներ՝

1. Կոմբինացված պրոթեզներ
2. Կերամիկական և ցիրկոնե կոնստրուկցիաներ
3. Իմպլանտի վրա կոնստրուկցիաներ
4. Թվայնացման ծրագրեր ատամնատեխնիկական գործում

Այս նպատակով մասնագետները ամեն ամիս առցանց հանդիպումներ են ունեցել՝ քննարկելով դասավանդման մեթոդները, բովանդակությունը և արդիական միտումները: Ուսումնական նյութերը թարգմանվել են ֆրանսերենից հայերեն՝ ապահովելով դրանց հասանելիությունը հայաստանյան գործընկերների համար: Կրթական գործընթացը արդյունավետ և ամբողջական դարձնելու նպատակով յուրաքանչյուր մոդուլի համար նախատեսվում է ստեղծել թեմատիկ պլաններ, գործնական առաջադրանքներ, քննությունների հարցաշարեր:

Նոր մոդուլների ներդրումը նպատակ ունի պատրաստել մրցունակ մասնագետներ՝ բավարարելու ոլորտի պահանջարկը և ապահովելու որակյալ ծառայություններ: Այս քայլը հնարավորություն կտա բարելավել հայկական կրթական համակարգը՝ համադրելով ֆրանսիական առաջադեմ փորձն ու հայկական արդի մոտեցումները:





Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Erasmus+ IMPROVET-AM վերապատրաստման դասընթացներ Գյումրու պետական բժշկական քոլեջում

Էրազմուս+ IMPROVET-AM ծրագրի շրջանակում հոկտեմբերի 6-ին և 7-ին Գյումրու պետական բժշկական քոլեջը հյուրընկալեց Ֆրանսիայի Լիոն քաղաքի ՍԵՊՌ ուսումնական կենտրոնի ներառական կրթության բաժնի մասնագետ Մարի Լոր Դյուրանին: Նա կիսվեց իր փորձով քոլեջի վարչակազմի և դասախոսական անձնակազմի հետ՝ ներկայացնելով հատուկ կարիքներ ունեցող մարդկանց տարբեր խմբերը և վերջիններիս հետ արդյունավետ աշխատելու կրթական մեթոդները:
Դասընթացները ներառեցին ակտիվ քննարկումներ, գործնական աշխատանքներ և վերլուծություններ, որոնք մասնակիցներին հնարավորություն տվեցին ավելի հստակ պատկերացնել ներառական կրթության արդյունավետ իրականացումը:
Հոկտեմբերի 7-ին դասախոսների համար անցկացվեց գործնական խմբային աշխատանք, որի ընթացքում մասնակիցները բաժանվեցին խմբերի, և քննարկվեց առանցքային մեթոդների կիրառումը տարբեր հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ներառման համար :
Վերապատրաստման շրջանակում կազմակերպվեց նաև առցանց հանդիպում Օրելիեն Բուլարի՝ ՍԵՊՌ ուսումնական կենտրոնի թվայնացման և մանկավարժական հմտությունների մասնագետի, և Լիդա Պողոսյանի, IMPROVET-AM ծրագրի համակարգողի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին դասավանդողին անհրաժեշտ մանկավարժական հմտությունները:
Դասախոսները դասակարգեցին հմտությունները, իսկ Օրելիեն Բուլարը ներկայացրեց դասավանդման արդյունավետության համար անհրաժեշտ մանկավարժական հմտությունների ամբողջական ցանկը, որտեղ ուշադրություն դարձվեց նաև կրթության մեջ թվային միջոցների ինտեգրմանը :
Այս դասընթացները ամրապնդեցին քոլեջի՝ ներառական կրթություն ապահովելու կարողությունը՝ զինելով աշխատակազմին նոր հմտություններով՝ բոլոր սովորողներին աջակցելու համար:
Հարկ է նշել, որ ՍԵՊՖԱ-ի դասավանդողները ևս անմասն չմնացին վերոնշյալ վերապատրաստումներին



IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

IMPROVET-AM ծրագրի միջանկյալ գնահատում

Դոկտոր Նարեկ Թովմասյան, արտաքին գնահատող

2025 թվականի ապրիլին IMPROVET-AM ծրագիրը հասավ իր կարևոր փուլերից մեկին՝ միջանկյալ գնահատմանը:
Այս գործընթացը հնարավորություն տվեց ամփոփել ծրագրի առաջին հատվածում կատարված աշխատանքը և հստակեցնել հետագա ուղղությունները:
Գնահատումն իրականացվեց՝ հիմնվելով ԵՄ-ի և ՏՀԶԿ/ԶԱԿ(OECD/DAC) չափանիշների վրա՝ վերլուծելով ծրագրի համապատասխանությունը, արդյունավետությունը, կայունությունը և սկզբնական ազդեցությունը:

Զգալի առաջընթաց և հստակ ուղղություն

IMPROVET-AM-ը լիովին համահունչ է ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրին, ինչպես նաև Erasmus+CBVET ծրագրի սկզբունքներին՝ նորարարություն, ներառականություն և թվային փոխակերպում:
Շնորհիվ այնպիսի նախաձեռնությունների, ինչպիսիք են ուսումնական ծրագրերի արդիականացումը, միջազգային վերապատրաստումները և գործնական փոխանակումները (job shadowing), ծրագիրը զգալիորեն նպաստել է ուսուցիչների մասնագիտական հմտությունների զարգացմանը և կրթական հաստատությունների ամրապնդմանը:
Այս գործողությունները պարզապես ծրագրված քայլեր չեն. դրանք իրական փոփոխություններ են բերում մասնագիտական կրթության զարգացման մեջ Հայաստանում:

Տեսանելի արդյունքներ և իրական փոփոխություններ

Նախաձեռնության կեսին արդեն ակնհայտ են դրական արդյունքները.

- Ուսուցիչները նշում են, որ դարձել են ավելի վստահ, ավելի կարող և ավելի ոգեշնչված իրենց աշխատանքում:
- Սովորողները ստանում են ավելի որակյալ և գործնական ուսուցում,
- Մասնագիտական կրթության կենտրոնները ձևավորում են միջազգային գործընկերություններ, որոնք կշարունակվեն նաև ծրագրի ավարտից հետո:

Հեղինակի մասին

Դոկտոր Նարեկ Թովմասյանը հանդիսանում է IMPROVET-AM ծրագրի արտաքին գնահատողը:
Ավելի քան 20 տարվա փորձ ունենալով Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնահատման և կրթական բարեփոխումների ոլորտում, նա իր աշխատանքում կիրառում է փաստերի վրա հիմնված և ապագային միտված մոտեցում:
IMPROVET-AM ծրագրի վերջնական գնահատման հաշվետվությունը կհրապարակվի 2026 թվականի նոյեմբերին:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

IMPROVET-AM ծրագրի միջանկյալ գնահատում

Դոկտոր Նարեկ Թովմասյան, արտաքին գնահատող

Այս ձեռքբերումները նպաստում են ազգային քննարկումներին մասնագիտա-կան ուղղորդման և աշխատաշուկայի զարգացման թեմայով՝ կրթությունն ավելի սերտորեն կապելով Հայաստանի աշխատանքի շուկայի իրական պահանջների հետ:

Խնդիրներ, որոնք դեռ պահանջում են ուշադրություն

Ինչպես յուրաքանչյուր խոշոր նախաձեռնություն, IMPROVET-AM-ն էլ ունի իր մարտա-հրավերները.

- Քաղաքական որոշում կայացնողների սահմանափակ ներգրավվածություն,
- Որոշ հաստատություններում հնացած տեխնիկական սարքավորումներ,
- Տարանջատված մասնագիտական ուղղորդման համակարգեր,
- Վարչական ուշացումներ, որոնք ազդում են շարժունության ծրագրերի վրա:

Այս խնդիրների լուծումը կարևոր է ծրագրի շարժը պահպանելու և դրա երկարաժամկետ ազդեցությունը խորացնելու համար:

Ինչ է սպասվում առաջիկայում

Գնահատման արդյունքում ձևակերպվել են մի շարք հիմնական առաջարկություններ՝

- Ապահովել պետական և ինստիտուցիոնալ աջակ-ցություն՝ ծրագրի արդյունքները ներառելու ազգա-յին քաղաքականությունների մեջ:

- Թարմացնել թվային գործիքներն ու սարքա-վորումները մասնագիտական կրթության կենտրոններում:
- Զարգացնել և ամրապնդել մասնագիտական ուղղորդման ազգային համակարգը:
- Պարզեցնել շարժունության գործընթացները և շարունակել ուսուցիչների շարունակական վերապատրաստումը:

Եզրակացություն

Հստակ ռազմավարությամբ, ներգրավված գործըն-կերներով և ամուր հիմքերով IMPROVET-AM ծրագիրը վստահորեն շարժվում է իր նպատակներին հասնելու ուղղությամբ:

Ծրագիրը ոչ միայն նպաստում է մասնագիտական կրթության արդիականացմանը Հայաստանում, այլև ձևավորում է ավելի հմուտ, ճկուն և ապագային պատրաստ մասնագիտական աշխատուժ:

Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

Կարիերայի ուղղորդում և արդյունավետ կառավարում. Վեբինարների շարք

IMPROVET-AM ծրագիրը մտնում է նոր փուլ՝ նվիրված փորձի փոխանակմանը, գործընկերային ուսուցմանը և մասնագիտական զարգացմանը:

ՍԵՊՌ (Ֆրանսիա) և Ապրո Ֆորմացիոնե (Իտալիա) գործընկերների աջակցությամբ առաջիկա ամիս-ներին կկազմակերպվի վեբինարների երկու շարք, որոնց նպատակն է զարգացնել Հայաստանի ՄԿՈՒ համակարգը:

Երկու նախաձեռնություններն էլ միտված են մեկ ընդհանուր նպատակի՝ խթանել ղեկավարների, խորհրդատուների և ուսուցիչների հմտությունների զարգացումը, ամրապնդել համագործակցությունը և նպաստել ՄԿՈՒ հաստատությունների արդիակա-նացմանը:

Վեբինարներ կարիերայի խորհրդատուների և ուսուցիչների համար (աշխատանքային լեզուն՝ անգլերեն)

Միացե՛ք երեք ինտերակտիվ վեբինարների, որտեղ կներկայացվեն գործնական մեթոդներ և գործիքներ՝ ուսանողների կարիերայի ընտրությանը արդյունա-վետորեն աջակցելու համար:

Ժամանակացույց.

2025 թ. նոյեմբերի **26** - Կարիերայի ուղղորդում. նպատակներ, միջոցառումներ, գործիքներ

2026 թ. հունվարի **13** - Անհատական խորհրդա-տվություն. լսել, ուղղորդել և աջակցել սովորողներին

2026 թ. փետրվարի **23** - Խոսքից գործ. անհատական և խմբային ուղղորդում (փորձի փոխանակում)

- Գրանցվե՛ք և միացե՛ք հայ և եվրոպացի մասնա-գետների թիմին:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Կարիերայի ուղղորդում և արդյունավետ կառավարում. Վեբինարների շարք

Վեբինարներ ղեկավարների և վարչական անձնակազմի համար

Վեց առցանց հանդիպում՝ նվիրված մասնագիտական կրթության ապագան ձևավորող հիմնական ուղղություններին՝ կանաչ կրթություն, թվայնացում, միջազգային համագործակցություն, աշխատանքի վրա հիմնված ուսուցում և ձեռնարկատիրություն:

Ժամանակացույց.

2025 թ. նոյեմբերի 19 - Քաղաքացիական ներգրավվածություն, գենդերային հավասարություն և սոցիալական ներառում

2025 թ. դեկտեմբերի 17 - Միջազգայնացում. գործընկերություն, նախագծեր, շարժունություն:

2026 թ. հունվարի 21 - ՄԿՈՒ հաստատությունների կառավարում՝ կանաչ կրթության ներառմամբ:

2026 թ. փետրվարի 18 - Նորարարությունը դասավանդման մեջ և թվայնացում:

2026 թ. մարտի 11 - Աշխատանքի վրա հիմնված ուսուցում:

2026 թ. ապրիլի 15 - Ձեռնարկատիրություն և սոցիալական ձեռնարկատիրություն:

➤ Գրանցվե՛ք և միացե՛ք հայ և եվրոպացի մասնագետների թիմին:

- Այս վեբինարները ստեղծում են համատեղ ուսուցման, փորձի փոխանակման և զարգացման հարթակ, որտեղ հայ և եվրոպացի մասնագետները միավորում են իրենց ուժերը՝ բարելավելու կառավարման և մասնագիտական ուղղորդման համակարգերը:
- Ավելին՝ www.improvetam.eu



Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

Միացեք մեր գործընկերների թիմին

Ուրախ ենք ընդունել այն անհատներին և կազմակերպություններին, ովքեր կիսում են մեր տեսլականը՝ դառնալու IMPROVET-AM ծրագրի մաս: Միասին կարող ենք կատարել դրական փոփոխություններ և ստեղծել փայլուն ապագա Հայաստանի մասնագիտական կրթության համար:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար: